

«HOMO DIALOGUS». ՆՈՐ ԴԱՐԱՆՐՁԱՆԻ ՖԵՆՈՄԵՆԸ*

ԽԱՉԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

ԵՊՀ քաղաքական գիտության
պատմության և տեսության ամբիոնի դոցենտ,
քաղաքական գիտությունների թեկնածու

Քաղաքական մտքի պատմության ընթացքում բոլոր մարդակենտրոն պարադիգմաներն էլ շոշափել են հասարակության քաղաքական կազմակերպման համատեքստում մարդու տեղն ու դերը, անհատ-հասարակություն-պետություն (վերջին ժամանակներս նաև՝ շրջակա միջավայր) փոխհարաբերությունների համակարգը, մարդկային համակեցության միասնական նորմերի ու ինստիտուցիոնալացված կառուցակարգերի հետ կապված հիմնահարցերը: Այդ իմաստով քաղաքական մտքի զարգացման ընդհանուր օրինաչափության մեջ տեղավորվում է նաև սոցիալական փիլիսոփայության ու քաղաքական գիտության համակարգում ձևավորվող հումանիտար գիտելիքի նոր բնագավառը՝ քաղաքական երկխոսութաբանությունը, որի ուսումնասիրման հիմնական պրոբլեմը մարդկային նոր տեսակի՝ «HOMO DIALOGUS»-ի և նոր որակի փոխհարաբերությունների՝ երկխոսության հաղորդակցական կառուցակարգերի բացահայտումն ու ներդրումն է նոր դարաշրջանի հասարակական-քաղաքական պրակտիկայում: Ո՞րն է քաղաքական երկխոսութաբանության արդիականությունն ու հատկապես՝ «HOMO DIALOGUS»-ի ձևավորման հրատապությունն ու անհրաժեշտությունը:

XX դարում ու XXI դարի առաջին քառորդում քաղաքակրթության զարգացման ընթացքն ու ինդուստրիալ, հետինդուստրիալ ու հետմոդեռնիստական հասարակության այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են՝ հետինդուստրիալ, տեղեկատվական ու գիտելիքահեն արտադրությունը, ինտեգրացիոն հաղորդակցության նոր տեսակների առաջացումն ու հասարակության վրա նրանց ունեցած ազդեցությունը, հասարակության սոցիալական կառուցվածքի հատվածականության մեծացումը քաղաքական գիտության պրոբլեմատիկայի շարքում նոր խնդիրներ ու հարցադրումներ են առաջ բերում, որոնցից մեկն էլ երկխոսության հաղորդակցական համակարգերի ներդրումն է ինչպես քաղաքական իշխանության իրականացման գործընթացում, այնպես էլ «կլաստերային սոցիալական միջավայրում» [1]: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ հետմոդեռնիզմի շրջանակներում ձևավորված տեսական ու գաղափարական հայեցակարգերը լայն առումով չեն լուծում հասարակության առջև ծառայած գլոբալ հիմնախնդիրները. դեռ ավելին՝ որոշ դեպքերում նկատվում են հասարակական-քաղաքական անորոշությունների աճի ու տարաբնույթ ճգնաժամերի խորացման միտումներ, որոնք արդեն կարող են վտանգել համայն մարդկության գոյությունն ընդհանրապես:

* Հոդվածն ընդունվել է 01.09.2013:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, ք.գ.դ., պրոֆ. Գարիկ Քեոյանը:

Դեռ Թ. Կունը, խոսելով գիտության առաջընթացի սեփական պատկերացումների մասին, առաջարկում էր գիտության զարգացման ու գիտական «հեղափոխությունների» պարադիգմալ մոտեցումը: Թ. Կունի կարծիքով՝ յուրաքանչյուր պարադիգմա վաղ թե ուշ բախվում է պորբլեմների, որոնց բացատրությունը ինքնուրույն ի վիճակի չէ տալ: Խորացող անոմալիաները հանգեցնում են ճգնաժամի, որից հետո արդեն գալիս է նոր հեղափոխական պարադիգմայի ժամանակը:[2]

Մեծ հաշվով, հատկապես հումանիտար ոլորտին առնչվող բոլոր հիմնական պարադիգմաները նման «հեղափոխությունների» արդյունք են: Այդպես է նաև քաղաքական երկխոսութաբանության պարագայում, որը յուրօրինակ արձագանք է XX դարի տիրապետող պարադիգմաներին: XX դարը մարդկության պատմության ամենարյունոտ ու բռնությամբ լի դարաշրջանն էր, որն աչքի ընկավ Համաշխարհային երկու մեծ պատերազմներով ու հարյուրավոր տեղային ու տարածաշրջանային մասշտաբի հակամարտություններով: Այդ բախումներն, ընդհանուր առմամբ, հանգեցրին շուրջ հարյուր միլիոնից ավելի մարդկային կորուստների, փախստականների հոծ բազմությունների, ամայացած տարածաշրջանների ու քայաքայված տնտեսությունների: Հարկ է նշել միայն, որ XX դարում կոնֆլիկտների պատճառով ավելի շատ մարդ է մահացել, քան մարդկության ողջ պատմության ընթացքում: Այդ մասին են վկայում նաև փորձագիտական հաշվարկները: Մասնավորապես, եթե XIX դարի պատերազմներում մարդկային կորուստները կազմել են մոտ 6 միլիոն, ապա XX դարի ընթացքում դրանց թիվն արդեն հատել է 100 միլիոնի սահմանը: [3] Իսկ XX դարի երկրորդ կեսում միայն հաշվարկվում էր շուրջ 300 հակամարտություն, որոնցից 200-ում մշտապես ներգրավված էին զինված ուժեր: [4] Այդպիսի ժառանգություն մենք ստացանք XX դարից:

Երկրորդ հիմնավորումը, որը խոսում է քաղաքական երկխոսութաբանության արդիականության օգտին, վերաբերում է նրան, որ «երկխոսության մասին երկխոսությունից», այսինքն՝ զուտ տեսական-հայեցակարգային դատողություններից, զուտ խոսակցություններից շուտափույթ պետք է անցում կատարել դեպի գործնական հարցադրումներ, այսինքն՝ դիտարկել «երկխոսությունը գործողության մեջ»: Ու այդ տեսանկյունից առավել արդիական են դառնում այնպիսի հիմնահարցերի ուսումնասիրություն, ինչպիսիք են՝ քաղաքական երկխոսության հաղորդակցական, տեխնոլոգիական առանձնահատկությունների բացահայտումը, երկխոսության գործընթացային ու ընթացակարգային կողմերի շեշտադրումները: Այս հիմնահարցերը, մեր կարծիքով, լավագույնս կարող են լուսաբանվել հենց քաղաքական երկխոսութաբանության համատեքստում:

Հաջորդ փաստարկ-հիմնավորումը վերաբերում է հասարակության քաղաքական ինքնակազմակերպման ու կառավարման նոր մոտեցումների ու տիպորինակների ներդրման անհրաժեշտությանը: Փաստ է, որ տեղեկատվական, հաղորդակցական հասարակության ձևավորմանը զուգահեռ, փոխվում են նաև մարդկանց քաղաքական ինքնակազմակերպման ու կառավարման ձևերն ու սկզբունքները, վերանայվում են իշխանության իրականացման ավանդական մեխանիզմներն ու պատկերացումները, մենախոսային հաղորդակցական տեխնոլոգիաներին փոխարինելու են գալիս երկխոսութային քաղաքական հաղոր-

դակցման կառուցակարգերը, ժողովրդավարական բարեփոխումների գործընթացում գնալով կարևորվում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ ժողովրդավարության համախմբման գործում քաղաքական երկխոսության մշակույթի ունեցած դերակատարումը, ժողովրդավարության նոր մոդելների՝ կոմունիկատիվ, խորհրդակցական (դելիբերատիվ) ժողովրդավարության աճող նշանակությունը հասարակության քաղաքական կառավարման մոդելների շարքում: Բնականաբար, սրանք հարցադրումներ են, որոնք կարող են ուղղակի մասը կազմել քաղաքական երկխոսութաբանության խնդրային ու առարկայական դաշտի հստակեցման համար՝ դառնալով այս նոր գիտակարգի ուսումնասիրման առարկայական հենքը:

Եվ, վերջապես, հումանիտար գիտությունների պրոբլեմատիկայում նկատվող անտրոպոլոգիական շեշտադրումներն էլ ավելի են կարևորում մարդակենտրոն պարադիգմաների նշանակությունը, ու այստեղ է, որ քաղաքական երկխոսութաբանությունը շահեկանորեն առանձնանում է իր ուսումնասիրման հիմնական խնդրով, այն է՝ «HOMO DIALOGUS»-ի ձևավորումը՝ որպես նոր դարաշրջանի ֆենոմեն՝ ի հակակշիռ նախորդ հարյուրամյակում գերիշխող «HOMO CONFLICTUS»-ի:

Իսկապես որ XX դարի քաղաքական գաղափարախոսությունների արմատական ձևերը՝ ֆաշիզմը, կոմունիզմն ու ամերիկյան ֆունդամենտալիզմը, պարարտ հող են ստեղծում «HOMO CONFLICTUS»-ի ձևավորման համար: Յ. Գալտունգը, դիտարկելով վերոնշյալ երեք ֆենոմենները, հետաքրքիր բնութագրումներ է տալիս այդ գաղափարախոսությունների ազդեցության տակ ձևավորված մարդու կերպարին՝ ի դեմս Homo teutonikus-ի (տևտոնյան մարդ), Homo sovieticus-ի (խորհրդային մարդ) և Homo americanus-ի (ամերիկյան մարդ)[5]: Այս երեք ձևերն էլ Գալթունգը համարում է արևմտյան մարդու ծայրահեղ դրսևորումներ (homo occidentalis in extremis[6]), որոնցից ամեն մեկն իր հերթին բյուրեղանում է ավելի ծայրահեղ կերպարի մեջ՝ ի դեմս Homo hitlerensis-ի (հիտլերյան մարդ), Homo stalinensis-ի (ստալինյան մարդ) և Homo reaganensis-ի (ռեյգանյան մարդ):

Օրինակ, ըստ Յ. Գալթունգի, տևտոնյան մարդը, չնայած որ տարբերվում է արևմտյան քաղաքակրթությունից, միևնույն ժամանակ, զգալի չափով նաև նրա շարունակությունն է, քանի որ գաղութատիրությունը ընդհանուր արևմտյան հեռանկարի արտահայտությունն է, իսկ գերմանացիները ձգտում էին բաժին ունենալու գաղութատիրության մեջ, սակայն «օվկիանոսից անդին» հաջողություն չունեցան [7]: Հետևաբար, գերմանական մղումը դեպի Արևելք այդ կերպ դարձավ ընդհանուր առմամբ արևմտյան գաղութատիրության կողմ: Բացի այդ, ըստ Յ. Գալթունգի, արևմտյան մտածողության տևտոնական տիպում տեսությունների բուրգերն այնպիսի կարևորություն են ստանում, որ մեծապես վերանում են էմպիրիկ իրականությունից[8]: Ու այդ համատեքստում նացիստական տեսությունը գալիս է փոխելու գերմանացիների կոլեկտիվ ենթագիտակցությունը, որը բացատրում է ամեն ինչ: Նախ՝ հռչակվում է ազգի բացառիկության ու բոլորի վրա գերիշխանության հաստատման սկզբունքը, որը դիտում էր մյուսներին, այդ թվում և «սպիտակ Արևմուտքի մարդկանց իբրև ի ծնե անձարներ, հպատակներ, անգամ նույնիսկ որպես վնասատու միջատներ, այնպես որ նրանց կարելի էր զր-

կել պետական պաշտոններ զբաղեցնելու, հանրային տարածքից օգտվելու, այնուհետև՝ քաղաքացիության, վերջապես իրենց հոգու իրավունքից: Այս ամենը հեշտացնում էր ջնջել-հանգցնելու գործը: Տրամաբանական հետևանքները՝ Վանզեե, Օսվենցիմ[9]»: Ահա այսպես է բնութագրում Յ. Գալթունգը տևտոնյան մարդու կերպարը: Իր հերթին, Վ. Կոնսկոյի կարծիքով, երկրի կառավարման կոշտ մեթոդների ու պետության սահմաններում կյանքի բոլոր կողմերի խիստ կանոնակարգումը, քաղաքական, տնտեսական ու մասնավոր կյանքի ոլորտներում իշխանության անսահմանափակ միջամտությունը գերմանացիների ազգային բնավորության մեջ ձևավորել են մանրախնդրության ու համակարգին նվիրվածության գծեր[10]: Հատկապես նացիստական ժամանակաշրջանի Գերմանիայում գործող հստակ ուղղաձիգության սկզբունքը հնարավորություն է տալիս ստեղծելու հասարակական-քաղաքական մի «երկաթյա մեխանիզմ», որտեղ յուրաքանչյուրն ունի կոնկրետ գործառույթ, պարտականություն, իսկ այդ մեխանիզմ-բուրգի գագաթին կանգնած է գերմարդը՝ ի դեմս ֆյուրերի, որպես *Homo hitlerensis*-ի կատարյալ մարմնացում: Ըստ Յ. Գալթունգի՝ ֆյուրերն իր ձեռքում ունի մի բան, ինչը տրված չէ ոչ մի մահկանացուի՝ կյանքի ու մահվան վրա աստվածային վերահսկողությունը, և դա կիրառելի է ոչ միայն անհատ մարդ էակների, այլ նաև ամբողջական խմբերի, ռասաների, ազգերի ու ժողովուրդների վրա[11]: «Եվ ոչ միայն դա: Նա ուներ անգամ ոչնչացման իշխանությունը. չէ՞ որ նա համայն արարվածի վերջնական ավերողն էր[12]», -նշում է Յ. Գալթունգը:

Խորհրդային մարդու կերպարն իր տեսակով, ինչպես և տևտոնյան մարդը, ընդհանուր առմամբ, կարելի է ներառել *Homo conflictus* խմբի մեջ՝ միայն առավել ընդգծված գաղափարական ներկայանակով: Ինչպես նշում է Ա. Ջինովևը՝ *Homo soveticus*-ի ժամանակակիցն ու խորհրդային կարգերի, հատկապես ստալինիզմի ակտիվ քննադատը. -«Նա (նկատի ունի խորհրդային մարդուն-Խ.Գ.) լիակատար պաշտպանում է իր ղեկավարությանը, քանի որ օժտված է ստանդարտ գաղափարայնացված գիտակցությամբ՝ երկրի, որպես ամբողջի առջև պատասխանատվության զգացումով, զոհողության և ուրիշների զոհաբերելու պատրաստականությամբ»[13]: Եթե խորհրդային մարդուն նայենք ինչ որ վերացական բարոյականության տեսանկյունից, ապա ըստ Ա. Ջինովևի, առաջին հայացքից նա թվում է լիովին անբարոյական էակ: Ծիշտ է, որ խորհրդային մարդը բարոյական էակ չէ, սակայն սխալ է նրան անբարոյական համարելը, կարծում է ռուս գիտնականը, քանի որ *Homo soveticus*-ը առաջին հերթին գաղափարական էակ է [14]: Յ. Գալթունգը խորհրդային հասարակությունը ներկայացնում է որպես քառադասակարգ կառուցվածք ունեցող կազմավորում, որի բազիսում գյուղացիներն են[15]: «Նրանց խնդիրը պետության համար այնպիսի չնչին գներով արտադրելն էր, որ բարձրությամբ հաջորդ դասակարգը՝ բանվորները, իրենց էժան սննդի հիման վրա վաճառվեին պետության կողմից դարձյալ նվազագույն ծախսերով»[16]: Այս երկու դասակարգերը միասին, չնայած կազմում էին մեծամասնություն, սակայն ղեկավարվում էին ձեռքի աշխատանք չկատարող երկու իրար միախառնված խմբավորումների կողմից՝ կուսակցություն-գինկորականություն-ոստիկանություն (ԿՁՈ) և բյուրոկրատիա-պետական մարմիններ-մտավորականություն (ԲՊՄ) համալիրների տեսքով[17]: Առաջինները գաղափարախոսություն և հսկողություն, խրախուսում և պատիժ, հատկապես պատիժ ար-

տաղորդներ էին: Վերջիններն արտադրում էին պլանավորում, բարիքներ ու ծառայություններ: Սակայն բուրգի գազաթին հենց ԿՁՈ համակարգն էր, որը ղեկավարում էր ողջ խորհրդային հասարակությունը: Ինչ վերաբերում է ստալինյան մարդուն, ապա նա, ըստ էության, խորհրդային մարդու ծայրահեղ տեսակն է՝ հասցված անձի պաշտամունքի աստիճանի, որպես գեր-ես, որպես ժողովուրդների հայր, որպես նոր պատմության ու հասարակության կերտման ռահվիրա, որն իր ճանապարհին չի հանդուրժում ոչ մի դիմադրություն ու այլախոհություն, որի համար մարդկային կյանքը ոչինչ չարժե, ուն ձեռքում կենտրոնացած է անսահմանափակ ու սարսափազդու իշխանություն: Կարող է արդյո՞ք նման սոցիալ-հոգեբանական, գաղափարական ու քաղաքական մթնոլորտում խոսք գնալ քաղաքական երկխոսության ու համաձայնողական կառուցակարգերի կիրառման ու լայն տարածման մասին: Իհարկե ոչ, քանի որ վարչահրամայական համակարգի ու պետության կողմից հասարակական-քաղաքական կյանքի տոտալ վերահսկողության պայմաններում նվազագույնի է հասցվում ինչպես իշխանության սուբյեկտների, այնպես էլ հասարակական-քաղաքական ուժերի ու տնտեսվարող սուբյեկտների միջև երկխոսությանի տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները[18]: Իշխանության համակարգում հստակ գործող «հրաման-ենթարկում» կառուցակարգը գործնականում չի նախատեսում քաղաքականության սուբյեկտների միջև շահերի համաձայնեցման այլ եղանակներ: Իշխանության չափից դուրս կենտրոնացված ու հիերարխիկ կառուցվածքը անհնար է դարձնում որևէ հորիզոնական փոխհարաբերություն ինչպես իշխանական կառույցների, այնպես էլ իշխանությունների ու հասարակական-քաղաքական ուժերի միջև:

XX դարի երրորդ ֆենոմենը, որը նույնպես, ինչպես և նախորդ երկուսը, իր մեջ մարմնավորում է արևմտյան մարդու ծայրահեղ դրսևորումը, *Homo americanus*-ն է՝ խոստոված ռեյգանյան մարդու (*Homo reaganensis*) կերպարում: Մասնագետների կարծիքով՝ ամերիկացիների հոգեբանության վրա իրենց հետքն են թողել այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ ներգաղթի արդյունքում ձևավորված ազգային ու էթնիկական բազմազանությունը, բնության ու տեղաբնիկների նկատմամբ գիշատիչ վերաբեմունքը, ստրկատիրությունն ու քաղաքացիական պատերազմը, տնտեսական վերելքն ու համաշխարհային գերտերության կարգավիճակը[19]: Համաձայն Յ. Գալթունգի՝ ամերիկյան մարդու տիեզերաբանության հիմքում ընկած է այն համոզմունքը, որ աշխարհի կենտրոնը Արևմուտքն է, որի կենտրոնն էլ Ամերիկան է, ու այն, ինչ ամերիկյան է, հակված է տարածվելու ամբողջ աշխարհի վրա[20]: Բացի այդ, *Homo americanus*-ի աշխարհայացքի անքակտելի մասն են կազմում նաև անխախտ հավատը ազատ շուկայի, ամերիկյան պատրիոտիզմի, գիտատեխնիկական առաջընթացի ու ժողովրդավարության նկատմամբ:

Այնուհանդերձ, հարց կարող է առաջանալ, թե արդյո՞ք ամերիկյան մարդուն կարելի է *Homo ideologus* խմբի մեջ տեղավորել: Որոշ հետմոդեռնիստական միտումներով հանդերձ, թերևս, այո, քանի որ անժխտելի է ազատական ժողովրդավարության ազդեցությունը *Homo americanus*-ի ձևավորման վրա: Մեծ հաշվով, նա աշխարհին նայում է նույնչափ գաղափարական ակնոցներով, ինչ *Homo soveticus*-ը կամ *Homo teutonikus*-ը: Յ. Գալթունգը նույնպես ռեյգանյան մարդու

կերպարում առանձնացնում է գաղափարական կողմը՝ Ռեյգանին դիտելով ոչ իբրև «ռեալիստ», որը կամենում էր ուղղակի վճռական ու հավատարժան երևալ, այլ որպես ԱՄՆ-ի ուժեղ, արմատական, քրիստոնեական ակունքներ ունեցող դեկավար, որպես առավել մեծ նշանակության գաղափարախոս[21]: Ըստ Գալթունգի՝ Ռեյգանն իր նախագահության տարիներին Միացյալ Նահանգներին փաթաթեց լիակատար ամերիկյան արմատական մի գաղափարախոսություն, որի հենասյուներն էին «շուկայի մոգականությունը, Աստծո ծայրահեղական հայեցակարգայնացումը և ժողովրդավարությունը»[22]: Սակայն ռեյգանիզմի ֆենոմենը, Գալթունգի կարծիքով, շատ ավելի խոր արմատներ ունի ամերիկյան հասարակության մեջ, և մոլորություն է կարծելը, որ ռեյգանիզմը կանհետանար Ռեյգանի՝ քաղաքական թատերաբեմից հեռանալուց հետո: Ռեյգանիզմը երկու միտումների արմատական արտահայտությունն էր՝ թե՛ խորտակվող կայսրության, թե՛ նոր վերելքի: Բանն այն է, որ ռեյգանիզմի նշանի ներքո մարդիկ մշակեցին արմատական ծայրամասի գաղափարախոսություն՝ բարու և չարի, սպիտակի ու սևի շատ չափազանցված բացարձակապաշտական կատեգորիաներով: Ռազմական, կորպորատիվ կապիտալիզմի կառուցվածքին՝ հուճքի, շուկաների և շահույթի իր ընչաքաղցությանը, հավելվեց գաղափարախոսություն, անգամ աստվածաբանության տարրը, որն անհաշտ է չարի դեմ իր պայքարում[23]: Եվ ինչպես փորձը ցույց տվեց, ԱՄՆ հաջորդ նախագահներն այս քաղաքական ուղեգիծը շարունակողները եղան, ու Ռեյգանից հետո ԱՄՆ-ն դեկավարած բոլոր նախագահների քաղաքական բառապաշարում արմատավորվեց բարու ու չարի եզրույթաբանությունը, իսկ ամերիկյան արտաքին քաղաքականության հիմնական հայեցակարգը դարձավ «չարիքի առանցքի» երկրների ցուցակագրումն ու նրանց դեմ «անխոնջ պայքարը»:

XX դարին յուրահատուկ վերոնշյալ երեք ֆենոմենների՝ *Homo teutonikus*-ի, *Homo soveticus*-ի և *Homo americanus*-ի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ ըստ էության, երեքն էլ հստակ ընդգծված գաղափարախոսական երանգավորումներ ունեն: Այդ չափից դուրս շատ գաղափարախոսական շեշտադրումները, իրենց հերթին, պարարտ հող են նախապատրաստում գաղափարական մարդու առավել ծայրահեղական տեսակի ձևավորման համար՝ ի դեմս *Homo hitlerensis*-ի, *Homo stalinensis*-ի և *Homo reaganensis*-ի:

Ինչևիցե, ակնհայտ է, որ միակ ճշմարիտ գաղափարախոսության, իդեալական հասարակության ու քաղաքական համակարգի հավակնությունները, որոնք կային վերոնշյալ երեք գաղափարախոսություններում՝ ֆաշիզմում, կոմունիզմում ու ազատական ժողովրդավարությունում, հանգեցնելու են առձակատման սուր ձևերի, քաղաքական ու քաղաքակրթական բախումների, *Homo conflictus*-ի բացարձակ տիրապետությանը, ինչում, թերևս, XX դարն անգերազանցելի կմնա:

XXI դարի առաջին քառորդում, չնայած համաշխարհային տարբեր հարթակներում հնչող երկխոսության կոչերին ու քաղաքական երկխոսութաբանության առարկայական դաշտի ուրվագծմանը՝ ընդհանուր առմամբ, *Homo conflictus*-ը դեռ շարունակում է մնալ քաղաքականության մեջ ներգրավված հիմնական դերակատարների գործունեության վարքագիծը պայմանավորող վճռորոշ գործոն, ինչի արդյունքում էլ ավելի են խորանում հակասությունները համաշխարհային

քաղաքականության ու տնտեսության ոլորտում, մրցակցությունը՝ միջպետական ու տարածաշրջանային հարաբերություններում, անհանդուրժողականությունը՝ ներքաղաքական հարաբերությունների հիմնական սուբյեկտների՝ իշխանության ու ընդդիմության միջև փոխհարաբերություններում: Այդ բոլորի հավաքական դրսևորման արդյունքում հասարակության մեջ տիրապետող են դառնում նիհիլիստական տրամադրությունները, ավերման մոլուցքը, ուժով և բռնությամբ հիմնախնդիրների լուծման նախապատվությունը, որը կարող է հանգեցնել արդեն մարդկային քաղաքակրթության ինքնառչնչացման: Վերջին ժամանակներս ինտելեկտուալ տարբեր հարթակներում շատ է խոսվում, որ հին մոտեցումներով ու մտածողությամբ մարդկության առջև ծառայած նոր հիմնախնդիրներն այլևս անհնար է լուծել: Հարկավոր է մտածողության կտրուկ շրջադարձ, մարդկային նոր տեսակի՝ HOMO DIALOGUS-ի դերակատարման ակտիվացում, սոցիալական ու քաղաքական նոր որակի՝ երկխոսութային փոխհարաբերությունների հաստատում:

Անկասկած է, որ երկխոսության հիմնական սուբյեկտը մարդն է, ու այդ տեսանկյունից արդյունավետ հասարակական-քաղաքական երկխոսությունների կազմակերպման գործում, նախևառաջ, առաջնային նշանակություն ունի այդ գործընթացի անմիջական մասնակիցների մոտ երկխոսութային մտածողության, համապատասխան ինտելեկտուալ կարողությունների ու գործնական հմտությունների ձևավորումը, որին էլ կոչված է լինելու քաղաքական գիտելիքի ձեռք բերման նոր բնագավառը՝ քաղաքական երկխոսութաբանությունը:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. См.: Постмодерн //Аберкромби Н., Хилл С., Тернер Б.С. Социологический словарь /Пер. с англ. М., “Экономика”, 2004. стр. 341-342.
2. Տե՛ս Ենգոյան Ա. Концепция “научной парадигмы” Томаса Сэмюэля Куна. Եր., 2012, стр. 5:
3. Տե՛ս Соколов Б., XX век в зеркале военных демографических катастроф. //Тайны Второй мировой: Сб. статей. М., Вече, 2001, стр. 46:
4. Տե՛ս Блищенко В., Солнцева М. Региональные конфликты и международное право (первая половина XX-начало XXI века). 2005, стр. 10:
5. Տե՛ս Գալթունգ Զ. Խաղաղություն խաղաղ միջոցներով. Խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն, Եր., 2005, էջ 398-415:
6. Տես նույն տեղում:
7. Տես նույն տեղում, էջ 398:
8. Տես նույն տեղում, էջ 399:
9. Նույն տեղում:
10. Крыско В. Г. Этнопсихология и межнациональные отношения. М., 2002, стр.283:
11. Տես Գալթունգ Զ., նշվ. աշխ., էջ 401:
12. Նույն տեղում:
13. Зиновьев А. Гомо советикус. Мюнхен, 1981, стр. 148:
14. Տես նույն տեղում, էջ 149:

15. Տես Գալթունգ Յ., նշվ. աշխ., էջ 405:
16. Նույն տեղում:
17. Տես նույն տեղում:
18. Տես Գալստյան Խ. Քաղաքական բանակցություններ. տեսություն և պրակտիկա, Եր., էջ 111:
19. Տես Крыско В. Г., նշվ աշխ., էջ 274-275:
20. Տես Գալթունգ Յ., նշվ. աշխ., էջ 408:
21. Տես նույն տեղում, էջ 409:
22. Տես նույն տեղում, էջ 413:
23. Տես նույն տեղում, էջ 414:

РЕЗЮМЕ
“HOMO DIALOGUS”–феномен новой эпохи
Хачик Галстян

В данной статье рассматриваются некоторые актуальные вопросы политической диалогистики как нового направления в политической науке и в политических исследованиях. В частности, объектом исследования становится основная проблема политической диалогистики – формирование “HOMO DIALOGUS” как феномена XXI века и внедрение в общественно-политическую практику современного общества диалоговых форм коммуникации.

Рассматривая образ человека XX столетия, автор приходит к выводу, что радикальные формы проявления политических идеологий таких, как фашизм, коммунизм и американский фундаментализм, способствуют формированию таких типов человеческого поведения, как Homo teutonikus, Homo sovieticus и Homo americanus. В свою очередь, они кристаллизуются в более агрессивном типе HOMO CONFLICTUS-а, в лице Homo hitlerensis-а, Homo stalinensis-а и Homo reaganensis-а.

В первой четверти XXI века HOMO CONFLICTUS продолжает оставаться основным типом поведения политических акторов, на смену которого скорейшим образом должен прийти новый образ человека в лице HOMO DIALOGUS-а как нового типа человеческого мышления и поведения.

SUMMARY
"HOMO DIALOGUS" as the Phenomenon of New Era
Khachik Galstyan

This article deals with some actual issues of political Dialogistics as a new direction within political science and research. In particular, the object of investigation is the fundamental problem of political Dialogistics i.e. the formation of "HOMO DIALOGUS" as the 21st century phenomenon and implementation of dialogue modes of communication in social and political practices of modern society.

Considering the image of the man of the 20 th century, the author comes to the conclusion that the radical forms of political ideologies such as fascism, communism, and American fundamentalism contribute to the formation of such types of human behaviour as Homo teutonikus, Homo sovieticus and Homo americanus. They are further crystallized in a more aggressive type of HOMO CONFLICTUS, in the shape of Homo hitlerensis, Homo stalinensis and Homo reaganensis.

In the first quarter of the 21st century HOMO CONFLICTUS remains the main type of behaviour for political actors, which must be replaced as quickly as possible with a new image of a man - HOMO DIALOGUS as a new type of human mentation and behavior.